

Մաթեմատիկա 6-րդ դասարան

Մարզային Փուլ 2025 թ

Տևողությունը – 2ժ 30 րոպե

- Գտնել 2025-ի 3-ին բազմապատիկ բաժանարարների քանակը:
 1) այլ պատասխան 2) 12 3) 11 4) 10
 - Խնձորի 1 կգ-ի արժեքը թանկացրին 40 %-ով, այնուհետև նոր գինը էժանացրին 20 %-ով: Արդյունքում նրա գինը սկզբնականի համեմատ փոփոխվեց 30 դրամով: Որքա՞ն էր խնձորի 1 կգ-ի արժեքը սկզբում:
 1) 250 2) 350 3) 200 4) 300
 - Արամը գրատախտակին պատկերված 2×2 չափերի քառակուսու բոլոր չորս վանդակները ներկում է կանաչ և կարմիր գույներով: Քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարող է Արամը ներկել այդ քառակուսու չորս վանդակները:
 1) 15 2) 12 3) 13 4) 16
- | | |
|--|--|
| | |
| | |
- Քանի՞ քառանիշ թիվ գոյություն ունի, որոնց գրառության մեջ 1-ը մասնակցում է ճիշտ 3 անգամ:
 1) 36 2) այլ պատասխան 3) 35 4) 27
 - Գտնել $1+1 \cdot 2+1 \cdot 2 \cdot 3+1 \cdot 2 \cdot 3 \cdot 4+\dots+1 \cdot 2 \cdot 3 \cdot 4 \cdot 5+\dots+2025$ գումարի արդյունքում ստացված թվի վերջին թվանշանը:
 1) 5 2) 0 3) 3 4) 4
 - 3×3 ուղղանկյունը տրոհված է 9 ուղղանկյունների նկարում պատկերված եղանակով: Ուղղանկյուններից յուրաքանչյուրի ներսում գրված է նրա պարագծի մեծությունը: Գտնել դատարկ վանդակներով նշված ուղղանկյունների պարագծերի գումարը:
 2) 62 2) 72 3) 60 4) 74
- | | | |
|----|----|----|
| 10 | 12 | |
| | 20 | |
| | 22 | 24 |
- Մեկ շարքով գրված են $\frac{1}{2}; \frac{1}{3}; \frac{2}{3}; \frac{1}{4}; \frac{2}{4}; \frac{3}{4}; \frac{1}{5}; \frac{2}{5}; \frac{3}{5}; \frac{4}{5}; \dots; \frac{1}{26}; \frac{2}{26}; \frac{3}{26}; \dots; \frac{25}{26}$ համապատասխանաբար 2; 3; 4;; 26 հայտարարներով բոլոր կանոնավոր կոտորակները: Հաշվել $\frac{1}{2}$ -ից մեծ կոտորակների քանակը:
 1) 78 2) 156 3) 91 4) 182
 - Քանի՞ իրարից տարբեր եղանակներով կարելի է մանրել 2025 դուլարը մեկ և հինգ դոլարանոցների միջոցով:
 1) այլ պատասխան 2) 406 3) 404 4) 2025
 - Քանի՞ թվանշանից է բաղկացած $\underbrace{4 \cdot 4 \cdot 4 \cdot \dots \cdot 4}_{50 \text{ անգամ}} \cdot \underbrace{5 \cdot 5 \cdot 5 \cdot \dots \cdot 5}_{105 \text{ անգամ}}$ արտադրյալը:
 1) 54 2) 104 3) 105 4) 103

10. Երկու հրաձիգներից յուրաքանչյուրը կրակում է նշանակետին ճիշտ հինգ անգամ: Պարզվել է, որ Նրանց հավաքած միավորներն են 10; 9; 9; 8; 8; 5; 4; 4; 3; 2 ինչ-որ հերթականությամբ: Երկու հրաձիգների առաջին երեք կրակոցներից հավաքած միավորների գումարները հավասար են: Առաջին հրաձիգի վերջին երեք կրակոցների միավորների գումարը երեք անգամ մեծ է երկրորդ հրաձիգի վերջին երեք միավորների գումարից: Ի՞նչ միավոր է հավաքել երկրորդ հրաձիգը երրորդ կրակոցից:
- 1) 10 2) 8 3) 2 4) 4
11. Հայկը և Վարդանը բնակվում են միևնույն շենքում, որի յուրաքանչյուր շքամուտք ունի հավասար քանակությամբ բնակարաններ, իսկ յուրաքանչյուր հարկում չորս բնակարան է (բնակարանների համարակալումը սկսվում է 1-ից): Հայկը բնակվում է 3-րդ հարկի 83-րդ բնակարանում, իսկ Վարդանը՝ 7-րդ հարկի 205-րդ բնակարանում: Քանի՞ հարկ ունի այդ շենքը:
12. Գտնել *-երի փոխարեն գրված եռանիշ թվի մեծագույն արժեքը, որի դեպքում 523 *** վեցանիշ թիվը բաժանվում է և՛ 7-ի, և՛ 8-ի, և՛ 9-ի:
13. Խաղավարը դահլիճում նստած 100 մասնակիցների համար կազմակերպում է հետևյալ խաղը.
Նրանց մի մասը պետք է միշտ ճիշտ խոսի, իսկ մնացածները սուտ: Դահլիճից հերթականությամբ դուրս եկող 60 մասնակիցներից յուրաքանչյուրը հայտարարում է, որ դահլիճում մնացածների մեջ ստախոսները ավելի շատ են ճշտախոսներից: Խաղավարը՝ ելնելով հնչած 60 պատասխաններից գտնում է ճշտախոսների քանակը: 100 մասնակիցներից քանիսն են ճշտախոս:
14. Մեկ շարքով աճման կարգով գրված են բոլոր այն հնգանիշ թվերը, որոնց տասնորդական գրառության մեջ մասնակցում է միայն 1; 2; 3; 4; 5 թվանշանները՝ յուրաքանչյուրը մեկ անգամ: Նրանցից յուրաքանչյուրը համարակալվում է սկսած առաջինից (12345 ունի առաջին համարը): Ո՞ր համարի թիվն է 34251-ը:
15. 1-ից մինչև 30000 բոլոր բնական թվերը գրված են մեկ շարքով. 12345678910111213.....2999930000:
Այս շարքում քանի՞ անգամ է հանդիպում 2025 քառանիշ թիվը: